# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՋՐԱԲԵՐ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրաբեր համայնք
ՀՀ Կոտայքի մարզ, գ.Ջրաբեր, 0222-62860 djraber@mail.ru

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

16 սեպտեմբերի 2014թվականի N 21

### ՋՐԱԲԵՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԹԻՎ 8-ՐԴ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի պահանջներով

Համայնքի ավագանին որոշում է.

Հաստատել համայնքի ավագանու N8 հերթական նիստի հետևյալ օրակարգը

1.2014թ-ի օգոստոս ամսին մարզպետարանի կողմից համայնքում իրականացված վարչական հսկողության արդյունքների ամփոփման վերաբերյալ արձանագրության քննարկման մասին:

2. Համայնքային սեփականություն համարվող 1997-2008 թվականների արխիվային փաստաթղթերի սեփականության իրավունքը պետական սեփականության փոխանցելու մասին:

Կողմ -3 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ՀՐԱՉԻԿ

2. ՄԱՆՈՒԿՅԱՆ ՄԵՐՈՒԺԱՆ

3. ՄԱՆԱՍՅԱՆ ՌՈՒԶԱՆ

Համայնքի ղեկավար ԳԵՎՈՐԳ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ
# ՄԱՐԶԻ ՋՐԱԲԵՐ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրաբեր համայնք
22, Կոտայքի մարզ, գ.Ջրաբեր, 0222-62860 djraber@mail.ru

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

16 սեպտեմբերի 2014թվականի N 22

### 2014Թ ՕԳՈՍՏՈՍ ԱՄՍԻՆ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԿՈՂՄԻՑ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ՎԱՐՉԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԱՄՓՈՓՄԱՆ, ՎԵՐԱՀՍԿՈՂԱԿԱՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆ ՔՆՆԱՐԿՄԱՆ ՄԱՍԻՆ

2014թ-ի օգոստոս ամսին Հայաստանի Հանրապետության մարզպետարանի կողմից Ջրաբեր համայնքում իրականացված վարչական հսկողության արդյունքներով արձանագրվել է մի շարք խախտումներ,թերություններ և բացթողումներ: Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մարմինների մասին>> մասին Հայաստանի Հանրապետության օրենքի 77.5 հոդվածի պահանջներով համայնքի ավագանին

Որոշում է.

1.Հետագայում սեղմ ժամկետում գործող օրենսդրության պահանջներին համապատասխանեցնել վարչական հսկողության արդյունքներով արձանագրված խախտումները,թերությունները և բացթողումները:Համայնքապետարանի աշխատակազմին գործառույթներ իրականացնելիս խստորեն ղեկավարվել գործող օրենսդրության պահանջներով:

2.Առաջարկել համայնքի ղեկավարին արձանագրված խախտումների, թերությունների և բացթողումների համար մեղավոր աշխատակիցներին ենթարկել կարգապահական պատասխանատվության:

Կողմ 3 Դեմ 0 Ձեռնպահ 0

1. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՀՐԱՉՅԱ
2. [illegible]
3. [illegible]

Համայնքի ղեկավար ԳԵՎՈՐԳ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՋՐԱԲԵՐ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրաբեր համայնք
22, Կոտայքի մարզ, գ.Ջրաբեր, 0222-62860 djraber@mail.ru

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

16 սեպտեմբերի 2014թվականի N 23

### ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ 1997-2008 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ԱՐԽԻՎԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՊԵՏԱԿԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՓՈԽԱՆՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Արխիվային գործի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի դրույթներով

Համայնքի ավագանին որոշում է.

Համայնքային սեփականություն համարվող 1997-2008 թվականների արխիվային փաստաթղթերի սեփականության իրավունքը փոխանցել պետական սեփականության:

Կողմ -3 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ՀՐԱՉԻԿ
2. ՄԱՆՈՒԿՅԱՆ ՄԵՐՈՒԺԱՆ
3. ՄԱՆՈՒԿՅԱՆ ՌՈՒՍՏԱՄ

Համայնքի ղեկավար ԳԵՎՈՐԳ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

# Տեղեկատվություն

## Վարչական հսկողության արդյունքներով արձանագրված խախտումների և թերությունների հետ կապված կատարված աշխատանքների մասին

### Արտակարգ իրավիճակների բնագավառ

1.Ջրաբեր համայնքի տարահանման հանձնաժողովի կողմից մշակվել է տարահանման պլան:

2.Աշխատանքներ են տարվում բնակչության կենսաապահովման միջոցառումների պլանի մշակման ուղղությամբ:Ելակետային տվյալների առկայության դեպքում այն կհաստատվի:

3.Համայնքի ղեկավարի 08.06.2012թ թիվ 13 որոշմամբ հաստատվել է Ջրաբեր համայնքի բնակչության անհատական պաշտպանության միջոցներով ապահովման և համայնքի բնակչության պատսպարման հաշվարկները,համապատասխանաբար (հավելված 5 և հավելված 6):

4. Համայնքի ղեկավարի 20.08.2014թ-ի թիվ 020/81 գրությամբ համայնքի սեյսմիկ ռիսկի նվազեցման միջոցառումների նվազեցման հայտը ներկայացվել է Հայաստանի Հանրապետության Արտակարգ իրավիճակների նախարարություն:

### Առևտրի և ծառայությունների բնագավառ

1.Համայնքի ղեկավարի 01.09.2014թ. թիվ 13 կարգադրությամբ ստեղծվել է հանձնաժողով առևտրի և հանրային սննդի օբյեկտներում 2014թ-ի 4-րդ եռամսյակում հսկողություն իրականացնելու համար, ինչպես նաև հաստատվել է հսկողություն իրականացնելու ժամանակացույցը:

2.Առևտրի և հանրային սննդի օբյեկտներում ցուցատախտակները տեղադրված են:

3. 4-րդ եռամսյակից սահմանված կարգով կտրամադրվի համապատասխան թույլտվություններ:

### Բնապահպանության բնագավառ

Համայնքում նախապատրաստվում և մոտակա ավագանու նիստի հաստատմանը կներկայացվի <<Համայնքի սանիտարական մաքրման սխեման>> իսկ հունվարի 1-ից կսահմանվի աղբահանության գումար: Ինչ վերաբերվում է բնապահպանական իրավախախտումների մասին տեղեկացնելուն ,ապա այդպիսիք չեն եղել:

### Պաշտպանության բնագավառ

Համայնքի գինապարտների գրանցամատյաններում արձանագրված թերացումը կարգավորված է:

### Սոցիալական պաշտպանության բնագավառ

Չեոք է բերվել ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի 2007թ ապրիլի 12-ի N62-Ն հրամանով հաստատված Ձև12 մատյանը, որը համարակալված, թելակնքված և կնքված է:

Այսուհետ սահմանված կարգով կգումարվի նաև խնամակալության և հոգաբարձության նիստեր:

### Քաղաքաշինության բնագավառ

Աշխատանքներ են տարվում քաղաքաշինության բնագավառում գլխավոր հատակագծի, քաղաքաշինական կանոնադրության հաստատման ուղղությամբ ինչ վերաբերվում է թաղումների և գերեզմանատների գրանցման մատյանին ապա այն առկա է դեռևս 2011 թվականից:

### Տեղական ինքնակառավարման մարմինների պարտադիր լիազորությունների նկատմամբ Հայաստանի Հանրապետության մարզպետների կողմից իրականացվող

1. Ձեռնարկվել են միջոցառումներ մեկ ցուցատախտակ ևս տեղադրելու համար:

2. Ավագանու որոշումների նախագծերն արդեն պատրաստվում են և դրանք պարտադիր կարգով կտրամադրվի ավագանու անդամներին:Հանձնարարվել է աշխատակազմի քարտուղարին արձանագրություններ կազմելիս խստորեն ղեկավարվել ՀՀ կառավարության 2011թվականի հոկտեմբերի 6-ի նիստի N39 արձանագրային որոշման հաստատված մեթոդական ուղեցույցի 7-րդ կետի պահանջներին:

3. Աշխատանքներ են տարվում համայնքի քաղաքաշինական, բնապահպանական,գյուղատնտեսական կադաստրների վարման ուղղությամբ:

## Ֆինանսների բնագավառ

Դրամարկղային գործառնությունները համապատասխանեցվել է գործող օրենսդրության պահանջներին , մուտքի և ելքի օրդերների նկատմամբ այսուհետ կիրականացվի համապատասխան հաշվառում:

Գրասենյակային նյութերի 100.000 դրամի ապրանքագիր կարված է եղել այլ փաստաթղթերի հետ , որը ներկայումս տեղում է:

2015 թվականի բյուջեն կազմելիս հիմք կընդունենք <<Բյուջետային համակարգի մասին>>22 օրենքի պահանջները իսկ ապրանքանյութական պաշարների փաստաթղթավորումը այսուհետ կիրականացվի սահմանված կարգի համապատասխան:

Արդեն կատարվել է 3420.4 հազար դրամի ճշգրտում, որը արտացոլվել է ծախսային հատվածում ,որպես հողի օտարումից մուտքեր, բացասական նշանով:

Հանձնարարվել է հաշվապահին բոլոր վարձակալական պայմանագրերի նկատմամբ իրականացնել խիստ հաշվառում,ինչպես նաև հաշվարկել տույժ. տուգանքները: